Սիփան Շիրազ

Պատմություն ապագայի մասին

Իմ արժանապատվությունը թույլ չէր
տալիս, որ այդքան կոլոտ-կարճահասակ լի-
նեմ, և դրա համար ես մեկ մեկ արտասվում
էի: Դրա համար երկինքը այնքան բարձր
էր, այնքա՜ն, այնքա՜ն բարձր էր, չե՛ք պատ-
կերացնում: Եվ երբեք իմ ապրած ունայն ու
դատարկ տարիների ընթացքում չկարողա-
ցա իմ գլուխը կպցնել երկնքին, կամ եր -
կինքը իջեցնել, որ գլխիս կպչեր, որ գլուխս
երկինք դառնար, թեկուզ մի քիչ մեղավոր,
մի քիչ մուգ, մի քիչ կապույտ, մի քիչ առա -
վոտն իր ծոցում պահած, մի քիչ գիշեր պա -
հած իր ծոցում, մի քիչ խավար ու լույս,
մի քիչ ծնունդ և մահ, մի քիչ հարություն և
մահ, մի քիչ լռություն և աղաղակ իր մեջ
պահած այդ երկինքը դառնար իմ գլուխը,
կամ իմ գլուխը դառնար երկինք: Ահա՛ քեզ
ցանկություն:
Ա՛հ քեզ երանություն: ՈՒրեմն մի գլուխը
քի՞չ է քեզ, կամ մի երկինքը քի՞չ է աշ-
խարհի համար. -Այս աշխարհը մե՛րն է:
Եվ ես ասում եմ.- Թող ձեզ լինի և՛ իմ
գլուխը, և՛ այս երկինքը, ու թող ինձ մնա մի

կտոր ամպիկ, որը որ ես գիտեմ ավելի մաքուր է, քան այն գլուխը, որ ես կրում էի ուսերիս, և այն երկինքը, որ դուք մինչ ի մահ փառաբանում եք: